

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2022

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց բողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարությը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարությունը: Պատասխանների ճնարութիւնը ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Որտե՞ղ են բացվում միջատների մալպիզյան անոքները.

- 1) ճարպային մարմնում
- 2) հետնաղու սկզբնամասում
- 3) արտաքին միջավայրում
- 4) մարմնի խոռոչում

2

Ի՞նչոք բնորոշ չէ միաշաքիլավորների մեծամասնությանը.

- 1) սերմնամաշկի դժվար անշատումը
- 2) էնդոսպերմում պաշարանյութերի կուտակումը
- 3) առանցքային արմատային համակարգը
- 4) տերևների աղեղնացիոն ջղավորությունը

3

Խմբասնկերի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) էռկարիուս են
- 2) բազմարջիջ են
- 3) ունեն քլորոֆիլ
- 4) միքսոտրոֆ են

4

Ի՞նչ բաժիններ են տարրերում ձկների ողնաշարում.

- 1) պարանոցային, կրծքագոտկային, սրբանային և պոչային
- 2) կրծքագոտկային և պոչային
- 3) իրանային և պոչային
- 4) պարանոցային, իրանային և պոչային

5

Ինչո՞վ է տարրերվում օղակավոր որդերի մարտղական համակարգը տափակ որդերի մարտղական համակարգից.

- 1) ունեն լյարդ և ենթաստամոքսային գեղձ
- 2) ունեն կերակրափող, կտնառք, ստամոքս
- 3) չունեն կլան, հետնաղին ավարտվում է հետանցքով
- 4) աղիները ճյուղավորված են, ավարտվում են կոյանցով

6

Ո՞ր սեռահասուն կենդանին չունի կոյանց.

- 1) բաղակտուցը
- 2) ճարպիկ մողեսը
- 3) լճագորտը
- 4) ճագարը

7

Ո՞րն է էրիքոցիտների հիմնական գործառույթը.

- 1) վարակների դեմ պայքարը
- 2) անոքների պատերի հաստացման կանխարգելումը
- 3) բթվածնի և ածխաբթու զազի փոխադրումը
- 4) արյան թանձրուկի առաջացումը

8

Ինչպե՞ս է կոչվում իմունիտետի այն տեսակը, որն առաջանում է կարմրուկով հիվանդանալու հետևանքով.

- 1) արհեստական պասիվ
- 2) բնական ձեռքբերովի
- 3) արհեստական ակտիվ
- 4) բնական բնածին

9

Մարդու հաճգիստ ներշնչման ժամանակ օդի ի՞նչ քանակ է մասնակցում զազափոխանակությանը թոքերում.

- 1) 500 սմ^3
- 2) 3500 սմ^3
- 3) 1200 սմ^3
- 4) 360 սմ^3

10

Մարդու գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևի ո՞ր քլրում է զտնվում ճշգրիտ շարժումների գոտին.

- 1) ծոծրակային
- 2) ճակատային
- 3) քունքային
- 4) զազաբային

11

Ի՞նչո՞ւ մարդու տեսողական վերլուծիչի օժանդակ հարմարանք չէ.

- 1) արցունքագեղձերը
- 2) բարթիչավոր մարմինը
- 3) ակնագունդը շարժող մկանները
- 4) շաղկապենին

12

Մարդու ո՞ր ուսկորներն են միացած սերտաճման միջոցով.

- 1) ողնաշարի սրբանային բաժնի ողերը
- 2) ողնաշարի գոտկային բաժնի ողերը
- 3) վերին և ստորին ծնոտները
- 4) կրծոսկրը և կողոսկրերը

13

Որտե՞ղ են տեղակայված մարդու մաշկային ընկալիչները.

- 1) Վերնամաշկում
- 2) Ենթամաշկային բջջանքի տարրեր շերտերում
- 3) Վերնամաշկի ստորին շերտում և ենթամաշկային բջջանքում
- 4) Բուն մաշկում

14

Ո՞ր ռեֆլեքսն է բարդ.

- 1) Վիոշտոց
- 2) հազ
- 3) Վազք
- 4) Ծնկային

15

Մարդու երիկամների զարկերակներով որքա՞ն արյուն է անցնում մեկ օրվա ընթացքում.

- 1) 1,5-2 լ
- 2) 150-170 լ
- 3) 1500-1700 լ
- 4) 2000 լ

16

Ո՞ր նյութերի ճեղքումը կխանգարվի մարդու օրգանիզմում ստամոքսահյութի հիմնայնացման դեպքում.

- 1) Ճարպերի
- 2) ածխաջրերի
- 3) Աուկլեհինաբբուների
- 4) Սպիտակուցների

17

Ո՞ր պնդումն է ճիշտ վիտամին **B₁** -ի վերաբերյալ.

- 1) Քերվիտամինովի կամ ավիտամինովի դեպքում զարգանում են մաշկի և լորձաթաղանթների խոցեր, ճարպալույծ է
- 2) Զրալույծ է, ավիտամինովի դեպքում զարգանում է չարորակ սակավարյունություն
- 3) հանդիսանում է էներգիայի աղբյուր, քերվիտամինովի դեպքում խթանվում է ռոդրազինի սինթեզը
- 4) Քերվիտամինովի կամ ավիտամինովի դեպքում զարգանում է բերի-բերի հիվանդությունը, զրալույծ է

18

Ինչպե՞ս է տեղի ունենում մարդու սրտի աշխատանքի հումորալ կարգավորումը.

- 1) աղբենալինը և կալցիումի իոններն արագացնում են, իսկ կալիումի իոնները և ացետիլյուլինը դանդաղեցնում են սրտի աշխատանքը
- 2) աղբենալինը և կալիումի իոններն արագացնում են, իսկ կալցիումի իոնները և ացետիլյուլինը դանդաղեցնում են սրտի աշխատանքը
- 3) աղբենալինը և ացետիլյուլինն արագացնում են, իսկ կալցիումի և կալիումի իոնները դանդաղեցնում են սրտի աշխատանքը
- 4) աղբենալինը և կալցիումի իոնները դանդաղեցնում են, իսկ կալիումի իոնները և ացետիլյուլինն արագացնում են սրտի աշխատանքը

19

Ո՞ր հիվանդության հարուցիչը չի պատկանում պրոկարիոտներին.

- 1) անգինայի
- 2) խոլեռայի
- 3) կարմրուկի
- 4) տիֆի

20

Հետևյալ գործընթացներից ո՞րն է տեղի ունենում բջջակորիզում.

- 1) ԱԵՖ-ի սինթեզը
- 2) ԴՆԹ-ի սինթեզը
- 3) սպիտակուցի սինթեզը
- 4) ֆոտոսինթեզը

21

Ի-ՌՆԹ-ում նուկեոտիդների ո՞ր եռյակն է համապատասխանում ԴՆԹ-ի ԱԹԳ եռյակին.

- 1) ΩιԱՑ
- 2) ΩιԱԳ
- 3) ΣԱՑ
- 4) ΑԹՑ

22

Ո՞ր գործառույթն է իրականացնում ռիբոսոմը.

- 1) ածխաջրերի ճեղքավորում
- 2) սպիտակուցի կենսասինթեզ
- 3) ածխաջրերի կենսասինթեզ
- 4) ճարպերի փոխադրում

23

Թաղանքային կառուցվածք չունեցող օրգանիզմների թվին են պատկանում.

- 1) լիզոսոմներն ու վակուոլները
- 2) ոիբոսոմներն ու բջջային կենտրոնը
- 3) ոիբոսոմներն ու միտոքոնդրիումները
- 4) Գոլջիի ապարատն ու ոիբոսոմները

24

Ինչպե՞ս են բազմանում սպորավոր նախակենդանիները.

- 1) սպորների միջոցով
- 2) զուսպորների միջոցով
- 3) բազմակի կիսման միջոցով
- 4) բողբոջմամբ

25

Ի՞նչ է տեղի ունենում, եթե սկզբնական սեռական բջիջները անցնում են սերմնարանի աճման գոտի.

- 1) կիսվում են և վերածվում առաջին կարգի օվոցիտների
- 2) տեղի է ունենում ԴՆԹ-ի կրկնապատկում, և բջիջը վերածվում է առաջին կարգի սպերմատոցիտի
- 3) տեղի է ունենում ԴՆԹ-ի կրկնապատկում և բջիջների կիսում միտոզով
- 4) տեղի է ունենում ԴՆԹ-ի կրկնապատկում և բջիջների կիսում մեյոզով

26

Ի՞նչ է ռեակցիայի նորման.

- 1) հատկանիշի մոդիֆիկացիոն փոփոխականության սահմանները
- 2) տարվա ընթացքում զերմաստիճանի փոփոխության սահմանները
- 3) հատկանիշի մուտացիոն փոփոխականության սահմանները
- 4) տվյալ գենի որոշակի հատվածի փոփոխության չափը

27

Ի՞նչ է գեների կոմպլեմենտար ազդեցությունը.

- 1) տարբեր ալելային գույգերի փոխներգործությունը
- 2) շղթայակցված գեների փոխներգործությունը
- 3) մեկ ալելային գույգի փոխներգործությունը
- 4) գերդոմինանտությունը պայմանավորող գույգերի փոխներգործությունը

28

Ի՞նչ է գենոտիպը.

- 1) օրգանիզմի բոլոր գեների ամբողջությունը
- 2) սեռական քրոմոսոմներում գտնվող գեների ամբողջությունը
- 3) մեկ քրոմոտոմում գտնվող գեների ամբողջությունը
- 4) X քրոմոտոմում գտնվող գեների ամբողջությունը

29

Ինչպիսի՞ արդյունք է ստացվում երկիետերողիզոտ առանձնյակի և հոմոզիգոտ դոմինանտ առանձնյակի խաչասերման արդյունքում՝ երկու ալելներով էլ լրիվ դոմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում.

- 1) 4 ֆենոտիպային և 4 գենոտիպային խմբեր
- 2) 2 ֆենոտիպային և 4 գենոտիպային խմբեր
- 3) 1 ֆենոտիպային և 4 գենոտիպային խմբեր
- 4) 2 ֆենոտիպային և 2 գենոտիպային խմբեր

30

Նշվածներից որո՞նք են համարվում ռուլիմենտներ.

- 1) ձկների և խեցգետինների խոիկները
- 2) մարդու մատների արանքում թաղանքների առկայությունը
- 3) մարդու պոչը, լրացուցիչ պտուկները
- 4) մարդու ականջային և մաշկային մկանները

31

Առանձնյակներին մեկ պոպուլյացիայի մեջ միավորող գործոններից ո՞րն է զլիավորը.

- 1) ժամանակի ընթացքում առանձնյակների միմյանց նմանվելը
- 2) ազատ խաչասերման հնարավորությունը
- 3) ընդհանուր թշնամիների առկայությունը
- 4) սեռահասուն և ոչ սեռահասուն առանձնյակների փոխհարաբերությունները

32

Ո՞ր կենսացենոզն է բնութագրվում տեսակային առավել մեծ բազմազանությամբ.

- 1) անապատի
- 2) տափաստանների
- 3) արևադարձային անտառների
- 4) սունդրայի

33

Ի՞նչն է բնորոշ ազրուկոհամակարգերին.

- 1) օժտված են ինքնակարգավորմամբ
- 2) լրացուցիչ էներգիայի կարիք չունեն
- 3) դոմինանտ տեսակները բնական ընտրության արդյունք են
- 4) խախտված է բնական հավասարակշռությունը

34

Կենդանի նյութի ո՞ր ֆունկցիայի հետ է կապված ծծմքի և երկարի հանքերի առաջացումը.

- 1) միջավայրագոյացնող
- 2) էներգիական
- 3) դեստրուկտիվ
- 4) կուտակող

35

Էկոլոգիական գործոններից ո՞րն է կենսածին.

- 1) միջատներով բույսերի փոշոտումը
- 2) ջրի քիմիական կազմությունը
- 3) քամու արագությունը
- 4) օրվա տևողությունը

36

Ո՞ր պնդումն է ճիշտ գիշատչության վերաբերյալ.

- 1) գիշատիչ բույսերը կարող են կարգավորել միջատների թվաքանակը
- 2) բույսերի գիշատչությունը զարգացել է որպես ազոտի և այլ կարևոր տարրերի մշտական անբավարարության փոխատուցման ձև
- 3) գիշատիչները չեն կարող լինել երկրորդ կարգի կոնսումենտներ
- 4) գիշատիչ սնկերը չեն կարող ազդել հողում իրենց զոհերի՝ նեմատոռների թվաքանակի վրա

(37-38) Սրտի բոլորաշղանը տևում է 0,8 վրկ: Առողջ մարդու հարաբերական հանգստի վիճակում սրտի փորոքների բուլացման տևողությունը կազմել է 20 րոպե:

37

Քանի՞ վրկ է կազմել նախասրտերի կծկումը.

- 1) 60
- 2) 150
- 3) 96
- 4) 240

38

Քանի՞ լիտր արյուն է մղվել մեծ շրջանառություն, եթե մեկ փորոքի կողմից շրջանառություն մղված արյան ծավալը 70 մլ է.

- 1) 105
- 2) 84
- 3) 168
- 4) 42

(39-40) Գլուկոզի ճեղքումից հետո օրգանիզմում մնացել է 10 մոլ կաթնաքրու, և առաջացել է 318 մոլ ջուր: 1 մոլ գլուկոզից մինչև կաթնաքրու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋուլ, իսկ ԱԿՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋուլ/մոլ էներգիա:

39

Քանի՞ մոլ ԱԵՖ է սինթեզվել այդ ընթացքում.

- 1) 260
- 2) 304
- 3) 290
- 4) 276

40

Հաշվել ամբողջ պրոցեսի օգտակար գործողության գործակիցը.

- 1) 40,2%
- 2) 42,4%
- 3) 45,2%
- 4) 39,7%

41

Մարդու ո՞ր ուսկորը (նշված է ձախ սյունակում) կմախքի ո՞ր բաժնի կազմի մեջ է (նշված է աջ սյունակում) մտնում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Ուսկոր

- A. կրծոսկը
- B. անրակ
- C. բազկոսկը
- D. կող
- E. քիակ
- F. կոնքոսկը
- G. վեգ
- H. ճաճանչոսկը

Կմախքի բաժին

- 1. վերին ազատ վերջույթ
- 2. վերին վերջույթի գոտի
- 3. ստորին ազատ վերջույթ
- 4. իրան
- 5. ստորին վերջույթի գոտի

42

Մարդու արյան շրջանառության համակարգում առկա ո՞ր փականների գործառույթները (նշված են ձախ սյունակում) ո՞ր փականներին (նշված են աջ սյունակում) են համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Փականների գործառույթներ

- A. խոչընդոտում են արյան հետադարձ շարժմանը թռքային զարկերակից դեպի սիրտ
- B. խոչընդոտում են արյան հետադարձ շարժմանը ձախ փորոքից ձախ նախասիրտ
- C. ապահովում են արյան միակողմանի հոսքը երակներում
- D. գտնվում են ձախ փորոքի և առրտայի միջև
- E. շարակցահյուսվածքային թելիկներով ամրացած են աջ փորոքի պատերին

Փականներ

- 1. կիսալուսնաձև
- 2. երկփեղկ
- 3. եռափեղկ

43

Ինչպիսի՞ն է փոփոխականության ձևի (նշված է աջ սյունակում) և բերված օրինակների (նշված է ձախ սյունակում) համապատասխանությունը: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրինակներ

- A. բեղմնավորման ժամանակ զամետների պատահական գուգակցում
- B. աշնանը տերևների գույնի փոփոխություն
- C. տրիտոնիա
- D. ֆիզիկական մեծ քեռնվածությունների ժամանակ մկանների զանգվածի աճ
- E. նույլեռոտիդների մեկ գույզի փոխարինում
- F. հապլոիդիա
- G. պոլիպեպտիդային շղթայի ամինաթթվի փոխարինում

Փոփոխականության ձև

- 1. ֆենոտիպային փոփոխականություն
- 2. գենային մուտացիա
- 3. գենոմային մուտացիա
- 4. համակցական փոփոխականություն

44

Ո՞ր օրգանական միացությունը (նշված է ձախ սյունակում) ածխաջրի ո՞ր խմբին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրգանական միացություն

- A. զալակտոռ
- B. զիկոզեն
- C. զյուկոռ
- D. քաղանթանյութ
- E. խիտին
- F. ֆրուկտոռ
- G. ոլիպոռ
- H. էրիթրոռ

Ածխաջրի խումբ

- 1. միաշաքարներ
- 2. բազմաշաքարներ

45

Ո՞ր կենդանուն (նշված է աջ սյունակում) ո՞ր բնորոշումն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել ճիշտ համապատասխանությունը.

Բնորոշում

Կենդանի

- | | |
|---|-----------|
| A. կողոսկրեր չունի | 1. գորտ |
| B. սիրտը եռախորշ է | 2. աղավնի |
| C. ունեն երկխորշ՝ գեղձային և մկանային ստամոքս | |
| D. գոտկային և սրբանային ողերը սերտածել են | |
| E. պարանոցը կազմված է մեկ ողից | |
| F. շնչում է բոքերով և մաշկով | |
| G. արյունը թթվածնով հարստանում է ներշնչման և արտաշնչման ժամանակ | |
| H. մաշկը մերկ է, հարուստ է լորձ արտադրող գեղձերով | |

46

Ի՞նչ հաջորդականությամբ են ընթանում գործառույթները մարդու օրգանիզմում մեզի առաջացման և միզարձակման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. մեզի կուտակում միզապարկում
2. միզապարկի պատերի ընկալիչների դրդում
3. երկրորդային մեզի անցում երիկամի ավագան
4. միզապարկի պատերի մկանների կծկում
5. մեզի անցում միզածորան
6. միզարձակում

47

Ի՞նչ հաջորդականությամբ է ազդակն անցնում ռեֆլեքսային աղեղով մարդու օրգանիզմում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. զգայական նեյրոնի աքսոն
2. ընկալիչ
3. ողնուղեղային հանգույց
4. ողնուղեղի առջևի եղջյուր
5. շարժողական նեյրոնի աքսոն
6. ներդիր նեյրոն
7. զգայական նեյրոնի դենդրիտ
8. գործառող օրգան

48

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում արյան մակարդման գործընթացները մարդու օրգանիզմում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. քրոմֆոցիտների քայլայում
2. ֆիբրինի առաջացում
3. քրոմֆոցիտների հպում արյունատար անորի անհարթ մակերևույթին
4. արյան պլազմայի մեջ քրոմբինի արտազատում
5. արյունատար անորի պատի վնասում
6. քրոմբի առաջացում
7. ֆիբրինոգենի բնափոխում

49

Ինչպիսի՞ն է ալրոցեսների հաջորդականությունը կենդանական օրգանիզմում սպիտակուցի մոլեկուլի առաջացման ժամանակ.

1. սպիտակուցի տարածական կառուցվածքի խախտում
2. ջրածնային կապերի քայլայում
3. հիդրոֆոր փոխազդեցությունների և -S-S- կովալենտ կապերի առաջացում
4. սպիտակուցների ներմուծում օրգանիզմ
5. պեպտիդային կապերի առաջացում
6. հիդրոֆոր փոխազդեցությունների և -S-S- կովալենտ կապերի քայլայում
7. ջրածնային կապերի առաջացում
8. ամինաթրուների ներմուծում թջիջ
9. պեպտիդային կապերի քայլայում

50

Ինչպիսի՞ն է ալրոցեսների հաջորդականությունը՝ ռեցեսիվ մուտացիաների առաջացումից մինչև նրանց՝ ֆենոտիպում արտահայտվելը: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ռեցեսիվ մուտացիա կրող գամետների միաձուլում
2. նուկլեոտիդների երկու զույգի փոխարինում
3. ռեցեսիվ մուտացիայի առաջացում
4. լստ մուտանտ գենի՝ հոմոզիգոտ ձևի առաջացում
5. ռեցեսիվ մուտացիա կրող օրգանիզմում գամետների առաջացում
6. մուտացիայի արտահայտում ֆենոտիպում
7. ռեցեսիվ մուտացիայի տարածում

51

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում պրոցեսները՝ բակտերիաֆագով բակտերիայի վարակման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. բակտերիաֆագի սպիտակուցների սինթեզ
2. բջջաբաղանքի «լուծում»
3. նոր բակտերիաֆագերի ձևավորում
4. բակտերիաֆագի ԴՆԹ-ի սինթեզ
5. բակտերիայի ոչնչացում
6. բակտերիաֆագի ԴՆԹ-ի ներարկում բակտերիայի մեջ
7. պոչային ելունների ամրացում բջջաբաղանքին

52

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր ճիշտ պնդումները.

1. մարդու առանցքային կմախքն են կազմում գանգը և իրանի կմախքը
2. հոտն ընկալվում է արտաշնչման պահին
3. միջին ականջում ասպանդակը հպվում է կլոր պատուհանի թաղանթին
4. միջին ականջը հեղուկով լցված փոքրիկ խոռոչ է
5. աղբենալինը բարձրացնում է արյան ճնշումը, նեղացնում արյան անոթները
6. ենթամաշկային բջջանքը պաշտպանում է մարմինը սառեցումից՝ փոքրացնելով ջերմատվությունը
7. մարդու շնչառական ուղիների էպիթելիային բջջները և ձվատարների բջջները ունեն թարթիչներ

53

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. միջատները բաժանասեռ են, բազմանում են ինչպես անսեռ, այնպես էլ սեռական ճանապարհով, բեղմնավորումն արտաքին է
2. լողափամփուշտը նպաստում է ձկների լսողությանը
3. կաթնասուններն ունեն առտայի միայն աջ աղեղ, որը դուրս է զալիս ձախ փորոքից
4. քաղցրահամ ջրերի պոլիա հիդրան բաժանասեռ է
5. մաշկի միջոցով ջուրն արտաքին միջավայրից թափանցում է երկկենցաղի օրգանիզմ
6. ինֆուզորիաները բազմանում են սպորներով և կոնյուգացիայի եղանակով
7. խիտինը, մանանը պոլիսախարիդներ են, կազմում են սնկերի բջջապատը

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. Քոտոսինքեզի մքնային փուլում ածխածնի օքսիդը ֆիքսվում է ոիբուլոզարիֆուֆատ-կարբօքսիլազ ֆերմենտի միջոցով, որի արդյունքում առաջանում է վեցածխածնային միացություն
2. ԴՆԹ-ի մեկ շղայում աղենինային նուկլեոտիդի քանակը միշտ հավասար է թիմինային նուկլեոտիդի քանակին
3. Լիալիդները մասնակցում են մարդու մակերիկամների հորմոնների կենսասինքեզին
4. Վիրուսները պատկանում են նախակորիզավորների վերնաթագավորությանը
5. Մկանային բջիջների ցիտոպլազմայում պահպանվում է կալցիումի իոնների շատ բարձր խտություն՝ հատիկավոր ենդոպլազմային ցանցի կազմավորած սարկոպլազմային ցանցի շնորհիվ
6. Շրջակա միջավայրում նատրիումի իոնների պարունակությունն ավելին է, քան կենդանի բջիջներում, իսկ կալիումի իոնների պարունակությունը կենդանի բջիջներում է ավելին, քան շրջակա միջավայրում
7. Ծխախոտի խճանկարային հիվանդություն հարուցող վիրուսի մասնիկը ձողաձև է, իսկ ծխախոտի նեկրոզի վիրուսը գնդիկային տեսքով կառույց է

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. Գ.Սենդելի կատարած փորձերում դեղին գույնի և ողորկ սերմեր ունեցող ոլորի հնարավոր գենոտիպերի թիվը հավասար է չորսի
2. X քրոմոսոմը կոչվում է իգական քրոմոսոմ
3. Դոռզոֆիլ պտղաճանճի աչքերի գունավորումը սերի հետ շղթայակցված հատկանիշ է, որը պայմանավորող գենը գտնվում է X քրոմոսոմում
4. առաջին սերնդում 1:1 հարաբերությունն ըստ ֆենոտիպի ստացվում է այն դեպքում, եթե ծնողական առանձնյակներից մեկը հոմոզիգոտ է՝ ըստ ռեցեսիվ ալելի, մյուսը՝ հետերոզիգոտ
5. համաձայն Թ.Սորգանի՝ պտղաճանճի երկինտերոզիգոտ էզի և ռեցեսիվ հատկանիշներով արուի խաչասերման արդյունքում սերնդում կստացվի չորս ֆենոտիպ՝ յուրաքանչյուրից 25 %
6. գեներատիվ մուտացիաները սերնդում չեն դրսերվում

56

Նշել բոլոր սխալ պնդումները.

- բնական ընտրությունն ուղղորդում է էվոլյուցիային
- զուգահեռությունն էվոլյուցիոն փոփոխություն է, որի արդյունքում ազգակից օրգանիզմների մոտ առաջանում են նմանատիպ հատկանիշներ
- կրկնորդ տեսակներն ազատ խաչասերվում և բեղուն սերունդ են տալիս
- ներտեսակային գոյության կովի օրինակ է գորշ առնետի կողմից սև առնետի դուրս մղումը Եվրոպայի բնակավայրերից
- տեսակի ձևաբանական չափանիշի հիմքում ընկած է մի տեսակի առանձնյակների արտաքին և ներքին կառուցվածքի նմանությունը
- բնական ընտրությունը էվոլյուցիայի շարժիչ ուժ է
- մակրոէվոլյուցիան ավարտվում է նոր տեսակի առաջացմամբ

57

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

- միջկողային և ստոծանու մկանների թուլացման ժամանակ կողոսկրերն ու ստոծանին իջնում են և տեղի է ունենում արտաշնչում
- ավիշը երկու մեծ ծորաններով թափվում է ձախ փորոք
- պայմանական ռեֆլեքսներն առաջանում են գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևի տարբեր մասերի միջև ձևավորված ժամանակավոր կապերի միջոցով
- քթի խոռոչի վերին մասում գտնվում են հոտառական ընկալիչներ
- առրտան արյունատար համակարգի ամենախոշոր զարկերակն է, որը սկիզբ է առնում աջ փորոքից
- բազկի երկգլուխ և եռագլուխ մկանները հակագղիչներ են
- ձկնամկանը տեղակայված է բազկային հողի վերևում

58

Նշել բոլոր սխալ պնդումները.

- հոմոլոգ քրոմոսոմների կոնյուգացիան տեղի է ունենում մեյօզի առաջին բաժանման թելոֆազում
- կենդանիների ճվարջիջն ունի երկու քեն՝ անհմալ և վեգետատիվ, որն արտահայտվում է սպերմատոզուզիդի ներթափանցման հատվածով
- մեյօզի առաջին և երկրորդ բաժանումների միջև ընկած ժամանակաշրջանում՝ ԴՆԹ-ն չի կրկնապատկվում
- միտոզի մետաֆազի ժամանակ ցենտրիոլները միմյանցից հեռանում են դեպի բջջի հակադիր քենոներ, և նրանց միջև ձևավորվում է բաժանման իլիկը
- հետսաղմային ուղղակի զարգացումը բնորոշ է միջատներին
- ավտոտրոֆ են երկարաբակտերիաները, ծծմբարակտերիաները

(59-61) Սպիտակուցի զանգվածը 132000 գ.ա.մ. է:

- 59 Որոշել՝ քանի՞ անգամ է այդ սպիտակուցի սինթեզը կողավորող գենի զանգվածը գերազանցում սպիտակուցի զանգվածը, եթե մեկ ամինաքրվային մնացորդի միջին մոլեկուլային զանգվածը 120 գ.ա.մ. է, մեկ նուկլեոտիդինը՝ 300 գ.ա.մ.։
- 60 Գտնել տվյալ գենի երկարությունը (նմ), եթե մեկ նուկլեոտիդի երկարությունը 0,34 նանոմետր է։
- 61 Քանի՞ աղենինային նուկլեոտիդ կա տվյալ գենում, եթե հայտնի է, որ գուանինային նուկլեոտիդների քիվը 1,75 անգամ մեծ է աղենինային նուկլեոտիդների քիվուն։

(62-64) Շագանակագույն աչքերով, արյան երկրորդ խմբով, ուղիղ մազերով տղամարդն ամուսնացավ երկնագույն աչքերով, արյան երրորդ խմբով, ալիքաձև մազերով կնոջ հետ: Այդ ընտանիքում ծնվեց երկնագույն աչքերով, արյան առաջին խմբով, ուղիղ մազերով երեխա: Ալիքաձև մազերը ստացվում են որպես միջանկյալ հատկանիշ, եթք ծնողներից մեկն ունի գանգուր մազեր, մյուսը՝ ուղիղ:

62

Գտնել գանգուր մազերով երեխա ծնվելու հավանականությունը (%-ով):

63

Որոշել այդ ընտանիքում շագանակագույն աչքերով, արյան երկրորդ խմբով և ալիքաձև մազերով երեխա ծնվելու հավանականությունը (%-ով): Պատասխանը բազմապատկել 100-ով:

64

Քանի՞ տեսակի գենոտիպով երեխաներ կարող են ծնվել տվյալ ընտանիքում, եթե նշված հատկանիշները պայմանավորող գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարբեր գույգերում:

(65-66) Զերմահաղորդմամբ մաշկի միջոցով հեռանում է զերմության մինչև 15%-ը, իսկ գոլորշիացումով՝ զերմության 20%-ը: Օրվա ընթացքում զերմահաղորդմամբ մարմնից հեռացել է 1470 կգ էներգիա, իսկ մարմնի մակերեսը 2 m^2 է:

65

Քանի՞ կգ էներգիա է հեռացել օրգանիզմից գոլորշիացմամբ:

66

Քանի՞ միլիգրամ քրտինք գոլորշիացավ մաշկի 1 mm^2 մակերևույթից, եթե 1 գրամ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է $2,45 \text{ kJ}$ էներգիա:

(67-68) 100 օրվա ընթացքում (միջինը 15-ժամյա լուսային օր) ֆոտոսինթեզի պրոցեսում արտադրվել է 64 kg O_2 :

67

Գտնել ծառի տերևային մակերևույթի մակերեսը (m^2):

68

Որքա՞ն օրգանական նյութ (գլյուկոզ) է սինթեզվել այդ ընթացքում (կգ):

69

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. Ենթաստամոքսային գեղձի հյութն անգույն է, օժտված է թթվային հատկությամբ
2. Ստամոքսում տարբերում են օղակադիր, երկայնակի, թերթ մկաններ
3. Կլլման գործընթացը տեղի է ունենում այն ժամանակ, երբ կծկվում են ըմպանի և լեզվի հարթ մկանները
4. Քավիկը աղիքի պատի ելուն է, որի պատը կազմված է հարթ մկանահյուսվածքի նուրբ շերտից և ծածկված է բազմաշերտ էպիթելիով
5. Լեղածորանով լեղին լեղապարկից անցնում է ենթաստամոքսային գեղձ և ակտիվացնում ճարպերը ճեղքող ֆերմենտները
6. Պարասիմպարիկ նյարդային համակարգի նյարդերով հաղորդվող նյարդային ազդակներն ակտիվացնում են լեղու արտադրությունը

70

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. Վարսանդի սերմնարանում դիալիդի հավաքակազմով բջջից մեյոտիկ բաժանման արդյունքում առաջանում են հապլոիդ հավաքակազմով չորս բջջներ
2. Վարսանդի սերմնարանում մեզասպորը երեք միտոտիկ բաժանումներից հետո սկիզբ է տալիս ութ հապլոիդ կորիզներ պարունակող սաղմնապարկին
3. Փոշեհատիկում միկրոսպորը սկզբում կիսվում է մեյոզով, առաջացնելով հապլոիդ վեգետատիվ բջիջ, որը կիսվում է մեյոզով և առաջանում են չորս հապլոիդ հավաքակազմով սպերմիումներ
4. Վարսանդի սպիի վրա փոշեհատիկը ծլում է և առաջացնում է սաղմնապարկ
5. Լրկնակի բեղմնավորման արդյունքում սաղմնապարկից ձևավորվում է սերմը
6. Փոշեխողովակը զարգանում է գեներատիվ բջջից